ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Ժողովրդական դեպուտատների XX գումարման Ստեփանակերտի քաղաքային սովետի 6-րդ նստաշրջանը քննարկեց ՍՍՀՄ սահմանադրության փոփոխությունների ու լրացումների մասին օրենքի նախագիծը:

Զեկուցումով հանդես եկավ Ստեփանակերտ քաղաքի ժողովրդական դատավոր, դեպուտատ Վ. Ասրյանը:

Սահմանադրության փոփոխությունների ու լրացումների և ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին օրենքների նախագծերի վերաբերյալ իրենց դիտողություններով ու առաջարկություններով հանդես եկան Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար, դեպուտատ Ռ. Քոչարյանը, արտադրական կոմբինատի բանվորուհի, դեպուտատ Ա. Պետրոսյանը, ԼՂԻՄ 60-ամյակի անվան էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտորի տեղակալ, դեպուտատ Կ. Պետրոսյանը, կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղար, դեպուտատ Հ. Մելքումյանը, կաթի կոմբինատի բանվորուհի, դեպուտատ Լ. Բազյանը, նոր գործարանի բաժնի պետ Օ. Մելքումյանը, ՍՍՀՄ 50-ամյակի անվան կոշկի ֆաբրիկայի բանվորուհի, դեպուտատ Ռ. Ջանյանը, անհատական թոշակառու, դեպուտատ Ա. Բալայանը, քաղսովետի գործկոմի նախագահ Մ. Միրզոյանը, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի դիրեկտոր Է. Ղազարյանցը, Վ. Ի. Լենինի անվան տպարանի դիրեկտոր Յու. Ներսիսյանը:

Նստաշրջանը որոշեց հաստատել ՍՍՀՄ սահմանադրության (հիմնական օրենքի) փոփոխությունների ու լրացումների մասին և ՍՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին օրենքների նախագծերի վերաբերյալ դիտողություններն ու լրացումները և դրանք ուղարկել ՍՍՀՄ Գերագույն սովետի քննարկման: Հանձնարարվեց քաղսովետի գործկոմին շարունակել քաղաքացիների և աշխատավորական կոլեկտիվների առաջարկությունների ընդհանրացումը՝ դրանք ուղարկելով մարզսովետի գործկոմ՝ ՍՍՀՄ Գերագույն սովետին ներկայացնելու համար:

Նստաշրջանը նշեց, որ Խոջալու և Մալիբեկլու գյուղերում շարունակվող անօրեն շինարարությունը ապակայունացնում է իրադրությունը քաղաքում, խնդրեց ժողովրդական դեպուտատների մարզային սովետին՝ առաջիկա նստաշրջանում սպառիչ միջոցառումներ ձեռնարկել կարգուկանոնն ու օրինականությունը վերականգնելու, մարզի սահմանադրական իրավունքները պաշտպանելու համար:

Նստաշրջանը կրկին հաստատեց քաղաքի աշխատավորների վճռականությունը՝ հաստատակամորեն հասնել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծմանը, Ադրբեջանական ՍՍՀ վարչական ենթակայությունից մարզի դուրսբերմանը:

Նշվեց, որ ԼՂԻՄ-ի աշխատավորների սահանջը արդարացի է, բխում է ՍՍՀՄ սահմանադրության հիմնարար սկզբունքներից, ամրագրված է նրա 1-ին և 70-րդ հոդվածներում և համապատասխանում է միջազգային-իրավական համընդհանուր նորմերին:

Նշելով, որ հանրապետական իշխանությունները պարետային ժամի և հատուկ դրության քողի տակ ուժեղացնում են մարզի գյուղերը, ավաններն ու քաղաքները ադրբեջանցիներով մասսայական բնակեցնելու քաղաքականությունը՝ ոչնչացնում էթնիկական կազմը և դեմոգրաֆիական իրադրությունը փոխելու նպատակով, և հաշվի առնելով, որ պարետային ժամի պահպանումը օժանդակում է այդ հակահիրավական գործողություններին, նստաշրջանը խնդրեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցչից՝ վերացնել պարետային ժամը, մարզային սովետի առաջիկա նստաշրջանին խնդրեց քննարկել ու պաշտպանել այդ առաջարկությունը:

Հաշվի առնելով, որ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար առանձնացված միջոցները Ադրբեջանական ՍՍՀ կառավարությունն օգտագործում է միայն մարզի ադրբեջանական բնակավայրերի զարգացման համար, նստաշրջանը խնդրեց ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային սովետին դիմել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին՝ խնդրելով նշված միջոցները տրամադրել միասնական պատվիրատուին՝ ԼՂԻՄ սովետին՝ դրանք ըստ նշանակության օգտագործելու համար:

Նստաշրջանի աշխատանքին մասնակցեց ՍՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Բ. Ա. Նեֆեդովը: